1.4. ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

ՇՈՂԵՐ ՊՈՂՈՍՅԱՆ
10.07.2021-24.09.2021

Մայրաքաղաքը՝ *Լիսաբոն*
Պաշտոնական լեզուն՝ *պորտուգալերեն*
Ամենամեծ քաղաքները՝ *Լիսաբոն, Պորտո*
Կառավարման ձևը՝ *խորհրդարանական հանրապետություն*
Բնակչությունը՝ *10,799,270*
Տարածքը՝ *92,212 կմ քառ.*
Արժույթը՝ *եվրո*

Ներածություն: Ինչպես հայտնի է, տևական ժամանակ Պորտուգալիան շարունակում էր մնալ Արևմտյան Եվրոպայի թերզարգացած ծայրամասը՝ մայրցամաքի առաջատար երկրներից հետ ընկնելով տնտեսական և սոցիալական մի շարք ցուցանիշներով: Պորտուգալիան եվրոպական երկրներից միակն էր, որը մինչև 1970 թ. հանդիսանում էր գաղութային կայսրություն: Սակայն համառ կամքի և հետևողականության շնորհիվ թերզարգացած ծայրամասային երկիրը երկար տարիներ (մոտ 48 տարի) տևած դիկտատուրայից հետո կարողացավ ոտքի կանգնել, անդամակցել ԵՄ-ին և վերածվել բարձր տեխնոլոգիական հանգույցի: Սա արդեն «Նոր Պորտուգալիայի» ժամանակաշրջանն է:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս հետպատերազմական շրջանում առանձնահատուկ նշանակություն ունի արտասահմանյան երկրների տնտեսությունների զարգացման առաջավոր փորձի ուսումնասիրությունն ու արդյունավետ կիրառումը ՀՀ-ում: Հատկապես մեծ ուշադրության է արժանի այն երկրների փորձը, որոնք որոշակի ընդհանրություններ ունեն մեր երկրի հետ և հեղափոխությունից հետո կարողացել են արձանագրել տնտեսական աճ: Այս համատեքստում որոշակիորեն կարևորվում է Պորտուգալիայի տնտեսության զարգացման փորձի ուսումնասիրությունը, ինչն էլ պայմանավորում է մեր ***հետազոտության թեմայի արդիականությունը:***

Հետազոտության ***նպատակն է*** Պորտուգալիայի տնտեսական փորձի ուսումնասիրության միջոցով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանն ուղղված բարեփոխումների իրականացման եղանակների բացահայտումը: Հետազոտության ***խնդիրն է*** Պորտուգալիայի տնտեսության առանձին ոլորտների զարգացման գործընթացների վերլուծության արդյունք-

ների հիման վրա ՀՀ տնտեսության ոլորտների զարգացման հավանական ուղիների մշակումը: Հոդվածում ներկայացված հետհեղափոխական զարգացումները հնարավորություն են տալիս որոշակիորեն կանխատեսել համաշխարհային տնտեսության և քաղաքական աշխարհակարգի զարգացման կայուն միտումները, ինչպես նաև դրանցում գործող սուբյեկտների, կառույցների և ինստիտուտների վարքագիծը:

Արտասահմանյան հեղինակների կողմից ուսումնասիրվող թեման քննության է առնվել տարբեր՝ քաղաքական, սոցիալական, հեղափոխական, ինչպես նաև տնտեսական զարգացման տեսանկյուններից: Պորտուգալիայի զարգացման էվոլյուցիայի տարբեր կողմերը մանրազնին ուսումնասիրվել են Պ. Յակովլևի, Ն. Յակովլևայի, Ալ. Գրոմիկոյի և այլոց աշխատություններում: Սակայն ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հայրենական հեղինակների աշխատությունները բացակայում են:

Գրականության վերլուծություն: Մինչև 20-րդ դարի վերջը երկրի տնտեսական նկարագիրը և նրա տեղը աշխատանքի համաշխարհային բաժանման մեջ որոշվում էր գյուղատնտեսության, ձկնարդյունաբերության, թեթև արդյունաբերության և հանքարդյունաբերության որոշ ոլորտներով: Պորտուգալիան, միշտ լինելով ագրարային երկիր, 1960-ականներից սկսած սկսում է վերածվել օտարերկրյա կապիտալ ներդրումների կլանման երկրի, որոնք ձևավորում են երկրի տնտեսությունը[1]: Տնտեսության գործնականում «պարփակված» լինելը խոչընդոտ էր հանդիսանում տարածաշրջանային ինտեգրման և արտաքին տնտեսական կապերի ընդլայնման համար: Սակայն, ինչպես փաստում է Պ. Յակովլևը[2], այսօրվա Պորտուգալիան զարգացած ժողովրդավարական երկիր է, գործուն ինստիտուտներով, անկախ մամուլով, անհատի ներուժի զարգացման հարմարավետ պայմաններով, կյանքի երկարակեցությամբ (ավելի քան 80 տարի): Երկիրը նկատելի առաջընթաց է գրանցել սոցիալական ապահովության, կրթության և մշակույթի ոլորտներում, ինչի մասին վկայում են համապատասխան միջազգային հեղինակավոր վարկանիշներում նրա բարձր դիրքերը: Պորտուգալիան վերափոխվեց՝ միևնույն ժամանակ պահպանելով ազգային ինքնությունն ու ավանդույթները, իր ուրույն տեղը զբաղեցնելով համաշխարհային պատմության մեջ:

2018-ին Ա. Քիրնիի խորհրդատվական ընկերությունը առաջին անգամ Իբերիայի այս երկիրը ներառեց Ներդրումների վստահության ինդեքսում

[1] https://cyberleninka.ru/article/n/ponyat-portugalskuyu-revolyutsiyu/viewer

[2] Яковлев П., Яковлева Н., Португалия: результаты постреволюционных трансформаций, Мировая экономика и международные отношения, 2019, том 63, № 10, с. 78-88, с. 79, 10.20542/0131-2227-2019-63-10-78-88
https://www.imemo.ru/index.php?page_id=1248&file=https://www.imemo.ru/files/File/magazines/meimo/10_2019/09-YAKOVLEVA.pdf

ընդգրկված երկրների ցանկում: Համաշխարհային այս վարկանիշում Պորտուգալիան 22-րդ տեղում է՝ առաջ անցնելով Ավստրիայից և Նորվեգիայից[1]:

Բերենբերգի գլխավոր տնտեսագետ Քրիստիան Շուլցը Պորտուգալիան նույնիսկ անվանեց «եվրագոտու տնտեսական աճի նոր աստղ»: Նրա կարծիքով տարածաշրջանի պարտքային ճգնաժամը փոփոխություններ է առաջացրել ծայրամասային երկրների համար, ինչպիսին Պորտուգալիան է՝ ստիպելով արագ իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ և բարելավել իրենց արտահանման արտադրանքի մրցունակությունը[2]:

«Պորտուգալիա. հեղափոխությունից 40 տարի անց: Ի՞նչ է լինելու» գիտական զեկուցումների ժողովածուի ներածական մասում Ա. Գրոմիկոն ներկայացնում է, թե ինչպես է Պորտուգալիան շատ բան սովորել Եվրամիության անդամ դառնալու իր ձգտումներից, իսկ 1986 թվականից հետո՝ բուն անդամակցությունից: Հաջորդ 20 տարիները կարելի է անվանել «ոսկե դար» այս երկրի նորագույն պատմության մեջ: Հավասարապես կարևոր է հետագա իրադարձությունների անկողմնակալ վերլուծությունը՝ կապված ճգնաժամի, գործազրկության աննախադեպ աճի և երկիրը սնանկությունից փրկելու հուսահատ միջոցառումների հետ: Ինտեգրումից էյֆորիան հիմնականում ցրվել է, և եվրասկեպտիկ տրամադրությունները մեծապես աճել են: Այն, թե տեսանելի ապագայում որքան բարեկեցիկ կլինեն ճգնաժամից տուժած երկրները, ինչպիսին է Պորտուգալիան, կախված կլինի ամբողջ ԵՄ-ի ճակատագրից[3]:

Մեթոդաբանություն: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են Պորտուգալիայի տնտեսական բարեփոխումներն ու զարգացման պատմական ուղին, տեղեկատվության հավաքագրման համար կիրառվել են համակարգային, նկարագրական, համեմատական վերլուծությունների, տնտեսավիճակագրական խմբավորումների մոտեցումները, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտների զարգացման խթանման հիմնախնդիրները լուսաբանող հայրենական և արտասահմանյան հեղինակային հրապարակումները:

Վերլուծություն: Պորտուգալիայի տնտեսության վրա ազդել են երկու իրադարձություններ՝ Սալազար-Կաետանոյի ռեժիմի տապալումը 1974-ին և ԵՄ անդամակցությունը 1986-ին: Նախկին ռեժիմի պայմաններում (1926-1974)

---

[1] "Investing in a Localized World. The 2018 A.T. Kearney Foreign Direct Investment Confidence Index," A.T. Kearney: Global Business Policy Council, accessed January 11, 2021, http://www.iberglobal.com/files/2018/atkearney_fdi_2018.pdf. P. 3.

[2] https://www.vedomosti.ru/finance/articles/2014/02/17/na-vyhode-iz-krizisa-ekonomika-portugalii-vnezapno-obognala

[3] Громыко Ал. А, Португалия: 40 лет после революции. Что дальше? = Portugal: 40 Years After the Revolution. What is Next? / [под ред. В.Л. Верникова]. М., Ин-т Европы РАН, 2014, 82 с., (Доклады Института Европы = Reports of the Institute of Europe / Федеральное гос. бюджет. учреждение науки Ин-т Европы Российской акад. наук ; № 305). – Парал. тит. л. англ. – ISBN 978-5-98163-037-8. с. 8

կապիտալը կենտրոնացած էր մի քանի արդյունաբերական և ֆինանսական ընտանիքի խմբերի ձեռքում: Առաջխաղացումը հնարավոր էր միայն կրթված միջին խավի ներկայացուցիչների համար: Արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը Պորտուգալիայում մնում էին անարդյունավետ, իսկ աշխատուժի արտադրողականությունը՝ ցածր: Ներդրումներն ուղղվում էին հիմնականում աֆրիկյան գաղութներին: Գաղութներում ստացված շահույթը օգտագործվել է առևտրի և բյուջեի մնացորդների դրական հաշվեկշիռը պահպանելու համար: Հեղափոխական կառավարությունը նախ թուլացրեց նախկին էլիտայի տնտեսական բազան՝ աֆրիկյան գաղութներին անկախություն շնորհելով: 1975-ին աջակողմյան հեղաշրջման ձախողումից հետո հարավային և կենտրոնական շրջաններում խոշոր հողակտորները բռնագրավվեցին: Բանկերն ու ապահովագրական ընկերությունները ազգայնացվեցին, որին հաջորդեց մեծ և միջին արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը[1]:

Նոր պետական ձեռնարկությունների մեծ մասը բախվել է ծայրաստիճան բարդ կազմակերպչական և ֆինանսական խնդիրների: Արդյունքում, պետական բյուջեի ընդհանուր պակասուրդը և արտաքին պետական պարտքը աճեցին: Պորտուգալիայում օտարերկրյա ներդրումները հանվեցին ազգայնացման գործընթացից, իսկ օտարերկրյա կորպորացիաների դուստր ձեռնարկությունները կարևորվեցին երկրի տնտեսության մեջ: Որպես ԵՄ անդամ՝ Պորտուգալիան ստիպված էր ԵՄ ընդհանուր մաքսային սակագին ընդունել ԵՄ անդամ չհանդիսացող երկրներից ներմուծման համար և վարել ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականություն: ԵՄ անդամակցությունը դարձավ 1980-ականների վերջին և 90-ականների սկզբին երկրի տնտեսության փոփոխությունների շարժիչ ուժը:

Համաձայն Բրյուսելի պահանջների՝ երկրում մշակվել է տնտեսության ազատականացման գործընթաց, և քայլեր են ձեռնարկվել տնտեսության դիվերսիֆիկացման ուղղությամբ: Արդյունքում էականորեն կրճատվեց ՀՆԱ-ում գյուղատնտեսության և հանքարդյունաբերության ոլորտների մասնաբաժինները, փոխարենը աճեց ծառայությունների ոլորտի մասնաբաժինը: Միևնույն ժամանակ տեղի էր ունենում ազգային տնտեսության համակարգային վերափոխում: Արտաքին կապիտալը նպաստեց պորտուգալական տնտեսության դիվերսիֆիկացման և արդիականացման գործընթացին: Երկրում գործարկվեց օտարերկրյա ներդրումների ամենամեծ նախագիծը՝ Autoeuropa ավտոմեքենաների գործարանի կառուցմամբ (1999 թ. Volkswagen Group-ը վերցրեց Autoeuropa-ի բաժնետիրական կապիտալի 100 %-ը)[2]: Արդյունաբերության նախարար Լուիս Ամարալի խոսքերով՝ այս նախագիծը Պորտուգալիայի ողջ պատմության ընթացքում օտարերկրյա ներդրումների ծավալով իր

[1] https://www.krugosvet.ru/enc/strany_mira/PORTUGALIYA.html

[2] https://www.wikiru.wiki/blog/pt/AutoEuropa

արժողությամբ ամենամեծն էր՝ մոտ 3 մլրդ դոլար[1]: Գործարանի արտադրանքի մեծ մասը արտահանվում էր, սակայն եվրոպական շուկաներում բարձր մրցակցությունը թույլ չտվեց Autoeuropa-ին հասնել իր նախագծային հզորության: 2007 թ. Volkswagen Group-ը հայտարարեց 547 մլն եվրոյի ներդրման մասին և նույն տարում հաջողվեց հասնել պատմական նշաձողի՝ 1.5 մլն միավոր արտադրության: Գործարանը բացվելուց ի վեր Volkswagen-ի և Պորտուգալիայի կառավարության միջև կնքվել են մի քանի ներդրումային համաձայնագրեր, մասնավորապես՝ 2003-ին և 2007-ին: Այդ ներդրումներն ուղղված էին նոր արտադրական ենթակառուցվածքների տեղադրմանը, սարքավորումների արդիականացմանը, աշխատողների վերապատրաստմանը, արտադրական գծերի և մեթոդների արդյունավետության բարձրացմանն ու հմտությունների կատարելագործմանը[2]:

Անդամակցությունը Եվրոպական տնտեսական համայնքին, հնարավորություն ընձեռեց Լիսաբոնին լրացուցիչ ֆինանսական միջոցներ ձեռք բերել, վերակառուցել տնտեսությունը և համախմբել աճի նոր մոդելը: Ստացված միջոցները 1987-2007 թթ. ընկած ժամանակահատվածում ընթացիկ գներով գնահատվում են հետևյալ կերպ. 55 մլրդ եվրո Եվրամիության աղբյուրներից և բյուջեն է ներմուծվել 35 մլրդ եվրո՝ հանրային գույքի մասնավորեցման արդյունքում: Մուտք է արվել 90 մլրդ եվրո՝ ներկայիս ՀՆԱ-ի ավելի քան 40%-ը: Բացի այդ, երկիրը ստացել է շուրջ 60 մլրդ եվրո դրամական փոխանցումներ արտասահմանում աշխատող պորտուգալացի էմիգրանտներից: Ընդհանուր 10 միլիոն մարդ բնակչությամբ պետության համար սա կապիտալի բավականին ամուր ներարկում է: Այնուամենայնիվ տնտեսության դինամիկան եղել է անկայուն, և պորտուգալական ապրանքների մրցունակությունը շարունակում էր մնալ ցածր: Հետևաբար Պորտուգալիայի ՀՆԱ-ն աճեց 2-ից 5 անգամ ավելի դանդաղ, քան համաշխարհային միջին մակարդակը[3]:

Անցումը արժութային նոր համակարգին դրական հետևանքներ ունեցավ: Մի կողմից իջավ տոկոսադրույքների մակարդակը, բայց միևնույն ժամանակ միասնական եվրոպական արժույթի ներդրումը մեծացրեց երկրի տնտեսությունում կառուցվածքային անհամաչափությունները: Էսկուդոյից անցումը եվրոյի առաջացրեց սպառման ծավալների աճ՝ շնորհիվ ներմուծման ավելացմամբ, ինչը նպաստեց արտաքին առևտրի դեֆիցիտի աճի և ժամանակի ընթացքում սրեց ֆինանսական խնդիրները: Պատճառն այն է, որ երբ եվրոն ներդրվեց, Պորտուգալիայի արտահանման կառուցվածքը ակնհայտորեն շեղված էր դեպի արդյունաբերություն ցածր տեխնոլոգիական, դանդաղ աճող,

---

[1] Ford и VW в Португалии, В Португалии может случиться экономическое чудо, Журнал "Коммерсантъ Автопилот", № 3 от 07.03.1995, стр. 7, https://www.kommersant.ru/doc/297176

[2] https://www.wikiru.wiki/blog/pt/AutoEuropa, https://www.acap.pt/pt/ estatistica

[3] Яковлев, П.П., Стратегические повороты экономической политики Португалии// Латинская Америка, 2014, № 8, с. 38-52. 40-41, file:///C:/Users/User/Downloads/70106.pdf

աշխատատար ավանդական ճյուղեր, որտեղ ավելի շատ համեմատական առավելություններ ստանում էին ասիական և այն արևելաեվրոպական երկրները, ովքեր միացան Եվրամիությանը: Ազգային արժույթից հրաժարումը հանգեցրեց արժեզրկման, իսկ աշխատանքի արտադրողականության առումով Պորտուգալիան սկսեց հետ մնալ Եվրամիության մյուս անդամներից[1]:

Այսպիսով, դժվար ժամանակներ ապրած Պորտուգալիայի տնտեսությունը կարողացել է աստիճանաբար զարգանալ՝ շնորհիվ իր առջև դրված սկզբունքային նպատակների: ԵՄ-ի մեջ ընդգրկվելը մեծ հնարավորություններ ստեղծեց երկրի տնտեսության զարգացման համար: Այն խթան հանդիսացավ տնտեսության վերազինման համար, ինչպես նաև նպաստեց կառուցվածքային փոփոխություններին և տեխնիկական արդիականացմանը:

Ներկայացնենք բարեփոխումները՝ ըստ ոլորտների, որոնց բարեհաջող իրականացումը նպաստել է տնտեսության զարգացմանը:

Կենսաթոշակային բարեփոխումներ: 2005-ի ամռանը կառավարությունը հաստատեց կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը, որի նպատակն էր լուծել ծնելիության կտրուկ անկման բարդ խնդիրը. վերջին 30 տարիների ընթացքում այն նվազել է 35 %-ով (2.6-ից 1.5 %), ինչպես նաև կյանքի տևողության աճի խնդիրը (կանխատեսվում է, որ 65 տարեկանից բարձր անձանց թիվը 2050-ին կկազմի բնակչության ավելի քան 32 %-ը, 2005 թ. 17 %-ի փոխարեն)[2]: Այժմ Պորտուգալիայի բնակչությունը միջինում ավելի ծերացող է, քան ԵՄ անդամ երկրներում. համապատասխանաբար 41.9 և 41.2 տարի: Մակրոտնտեսական իմաստով այս միտման զարգացումը նշանակում է ներքին շուկայի անխուսափելի նեղացում՝ ավելի քիչ մարդիկ - ավելի քիչ սպառողներ[3]: Պորտուգալիայի կենսաթոշակային համակարգը (եկամտի վրա հիմնված հանրային կենսաթոշակային համակարգը ցածր եկամուտ ունեցող բարեկեցության համակարգով) կանգնած է բարդ կառուցվածքային մարտահրավերի առաջ. երկրում կար 1.7 միլիոն կենսաթոշակառու, որից 1.1 միլիոն կենսաթոշակառու ամսական ստանում էր 375 եվրոյից պակաս (չնայած այն հանգամանքին, որ Պորտուգալիայում կենսաթոշակները 2006 թ. ԵՄ-ում ամենաբարձրերից էր՝ հաճախ հասնելով աշխատողի աշխատավարձի 100 %-ին): Փորձագետները հաշվարկել են, որ կենսաթոշակային ծախսերը ՀՆԱ-ի 5,5 %-ից (2006 թ.) 2050 թ. կհասնեն 9,6 %-ի: Միևնույն ժամանակ՝ ծնելիության մակարդակը բարձրացնելու նպատակով բարեփոխումը նույնպես հաստատեց կեն-

---

[1] Яковлев П., Яковлева Н., Португалия: результаты постреволюционных трансформаций, Мировая экономика и международные отношения, 2019, том 63, № 10, с. 78-88, стр. 81-82.
https://www.imemo.ru/index.php?page_id=1248&file=https://www.imemo.ru/files/File/magazines/meimo/10_2019/09-YAKOVLEVA.pdf

[2] Г. И. Кутырев, Португальская Республика: современное состояние экономики, Вестник Московского университета имени С. Ю. Витте. Серия 1: Экономика и управление, 2017, 1(20), стр. 51, DOI: 10.21777/2307-6135-2017-1-48-555

[3] Society at a Glance 2014. Highlights: Portugal. The Crisis and its aftermath. OECD, March 2014, p.2.

սաթոշակային վճարների նոր համակարգ, որում դրանք հաշվարկվում են որպես տոկոս աշխատավարձից՝ ըստ երեխաների թվաքանակի. երկու երեխա ունեցող աշխատողների համար վճարները մնացել են անփոփոխ, երկուսից ավելի երեխայի ունենալու դեպքում՝ նվազել, իսկ մեկ երեխայի դեպքում՝ ավելացել:

Պորտուգալիայի փորձի հիման վրա առաջարկվում է ՀՀ ծնելիության խթանման համար սահմանել պարտադիր կուտակային կենսաթոշակային վճար՝ կախված երեխաների թվաքանակից: Որպես օրինակ՝ ներկայացնենք պարտադիր կուտակային վճարի չափի սահմանման սկզբունքը հետևյալ կերպ. այն ընտանիքները, որոնք ունեն մեկ երեխա, պարտադիր կուտակային վճարի չափը սահմանել 7,5 %, երկու երեխայի դեպքում՝ 5 %, երեք երեխայի դեպքում 1 %, իսկ 4 և ավելիի դեպքում ազատել պարտադիր կուտակային վճարից, նաև եկամտահարկից, ինչը կնպաստի ծնելիության խթանմանը, ինչպես նաև ժողովրդագրական ճգնաժամի հաղթահարմանը: Վերջինս կխթանի նաև կամավոր կուտակային համակարգի զարգացմանը:

Պորտուգալիայում ճգնաժամից դուրս գալու շարժիչ ուժերից մեկը վերամշակող արդյունաբերությունն էր: Ճգնաժամի հետևանքները չեզոքացնելու փուլում որոշվեց խրախուսել բիզնեսի գործունեությունը և արդյունավետ փոխգործակցությունը միջին և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում: Արդյունքում հետճգնաժամային շրջանում երկրում ձևավորվեցին մի քանի մրցակցային կլաստերներ տարբեր ուղղություններով, մասնավորապես՝ ավտոմոբիլային, ավիացիոն, քիմիական և նավթաքիմիական, հեռահաղորդակցական, տեղեկատվական, դեղագործական, բիոտեխնոլոգիա, վերականգնվող էներգիա: Դրանք մեծապես կարևորում են արդյունավետ տարածաշրջանային քաղաքականության շարունակականությունը, ինչպես նաև տարածքների զարգացման մեջ անհավասարակշռության հետագա վերացումը, այդ թվում՝ մարզերում կլաստերային կազմավորումներ ստեղծելու աջակցության միջոցով: Երկրի Ներդրումների և արտաքին առևտրի պետական գործակալությունը (պատասխանատու է արտահանման և օտարերկրյա ներդրումների խթանման համար) գյուղատնտեսության և սննդի ոլորտները, անտառային տնտեսությունը, շինանյութերի արտադրությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, կենսաբանական գիտությունների ոլորտը և առողջապահությունը սահմանեց որպես տարածաշրջանային «տնտեսական» ոլորտների գերակայություններ[1]:

Աշխատանքի շուկա: Պորտուգալիան ունի հմուտ աշխատուժ, ճկուն աշխատանքային օրենսդրություն, բարձր կրթական չափորոշիչներ, կրթության մատչելիություն, աշխարհի լավագույն համալսարանների հետ համագոր-

[1] Белов В.Б., Модернизировать хозяйственный механизм – первоочередная задача, Португалия: 40 лет после революции. Что дальше? / [под ред. В.Л. Верникова]. М., Ин-т Европы РАН , 2014, 82 с.. – ISBN 978-5-98163-037-8. стр. 62-68

ծակցություն: Կրթական համակարգի զարգացմանը զուգահեռ պետությունը սկսեց շատ ավելի մեծ ուշադրություն դարձնել գիտության և տեխնոլոգիայի ֆինանսավորմանը և զարգացմանը: Եվրոպական երկրների շարքում Պորտուգալիան առաջատար դիրք է գրավում 1000 բնակչի հաշվով գիտությունների դոկտորների քանակով: Ուսանողների 40 %-ը բարձրագույն կրթություն է ստանում ինժեներական, բնական գիտությունների և առողջապահության բնագավառներում: Վերջին 3 տարիների ընթացքում նրանց թիվն աճել է 30 %-ով: Պորտուգալացիները հայտնի են իրենց քրտնաջան աշխատանքով, ինչի շնորհիվ երկրում կորցրած աշխատանքային օրերի քանակի տարեկան գործակիցը ավելի ցածր է, քան եվրոպական այլ երկրներում[1]:

Աշխատանքի շուկան բարեփոխումների առանցքային ոլորտն է: Գործազրկությունը նվազել է ճգնաժամի գագաթնակետից, սակայն այն դեռ բարձր է, հատկապես երիտասարդների շրջանում: Պորտուգալիայի աշխատաշուկան ներկայումս բնութագրվում է ծանր և կոշտ մշտական պայմանագրերի ու ճկուն, բայց անորոշ ժամանակավոր պայմանագրերի համադրությամբ: Վերջինիս իրականացման եղանակը մշտական պայմանագրերն ավելի ճկուն դարձնելն է՝ միաժամանակ ժամանակավոր պայմանագրեր ունեցողների համար ավելացնելով մատչելի օգուտները, որպեսզի երկու տեսակի պայմանագրերն ընձեռեն միևնույն հնարավորությունները: Նպատակը բոլորի համար արդար աշխատաշուկայի ապահովման միջոցով բացը վերացնելն է, ինչը խթանում է աշխատատեղերի ստեղծումը:

Չնայած այն հանգամանքին, որ Պորտուգալիայի տնտեսությունն անցել է ավելի քան երկու տասնամյակ տևած մեղմ բում, անկում և ծանր ռեցեսիա, այն նորից կարողացել է ուժեղանալ՝ կենտրոնանալով վերջին մի քանի տասնամյակների ընթացքում տեղի ունեցած կարևոր կառուցվածքային բարեփոխումների վրա այնպիսի հիմնական ոլորտներում, ինչպիսիք են հմտությունները, ներդրումները, արտահանման ուղղվածությունը, աշխատաշուկան, ֆինանսական միջնորդությունը և պետական ֆինանսները[2]:

Պորտուգալիայի շրջադարձին նպաստել են նաև վերջին 15 տարիների ընթացքում աշխատանքային օրենսդրության մեջ կատարված կարևոր փոփոխությունները: Իրականացվել են բազմաթիվ բարեփոխումներ, որոնք ուղղված են եղել ընկերությունների ներքին ճկունությանը, ինչպիսիք են աշխատանքային ժամերի ճշգրտումը, գործազրկության ապահովագրությունը, աշխատանքից հեռացնելու սահմանափակումները և ժամանակավոր պայմանագրեր կնքելու հնարավորությունը՝ աշխատաշուկան դարձնելով ավելի

[1] https://www.portugalglobal.pt/Russia/Documents/%D0%98%D0%BD%D0%B2%D0%B5%D1%81%D1%82%D0%B8%D1%86%D0%B8%D0%B8%D0%B2%D0%9F%D0%BE%D1%80%D1%82%D1%83%D0%B3%D0%B0%D0%BB%D0%B8%D1%8E%D0%9F%D1%80%D0%BE%D0%B8%D0%B7%D0%B2%D0%BE%D0%B4%D1%81%D0%B2%D0%B5%D0%BD%D0%BD%D1%8B%D0%B5%D1%82%D0%B5%D1%85%D0%BD%D0%BE%D0%BB%D0%BE%D0%B3%D0%B8%D0%B8.pdf

[2] https://voxeu.org/article/turnaround-portuguese-economy

ճկուն և ցնցումներին հարմարվող: 2001–2007 թթ. ժամանակահատվածում Պորտուգալիայում բանվորական հոսքերը, ներառյալ աշխատատեղերի ստեղծման և կրճատման մակարդակները, զգալիորեն մոտ էին ԱՄՆ-ի ցուցանիշներին: 2001 թվականին ընդունվեց ՏՏ ոլորտում հիմնարար գիտելիքների սերտիֆիկացման համազգային համակարգ, որի շրջանակներում տրվել է 644 հազար հիմնարար գիտելիքի դիպլոմ: 2007-ին Պորտուգալիան ԵՄ-ում 9-րդն էր տեխնիկական գիտությունների դոկտորանտուրայի դիմորդների և 20-29 տարիքային խմբի քաղաքացիների թվաքանակի առումով: 2007-2009 թթ. Պորտուգալիան առավելագույն առաջընթաց գրանցեց Գլոբալ ինովացիոն ինդեքսի վարկանիշում՝ 22-րդ տեղից բարձրանալով 16-րդ տեղ: 2008 թ. Պորտուգալիան ԵՄ-ում մասնավոր ներդրումների առումով հինգերորդ տեղը զբաղեցրեց EIS վարկանիշով (European Innovation Scoreboard) և առաջին տեղը՝ աշխատակիցների որակավորման և հետազոտությունների ու զարգացման ոլորտում[1]:

Հետազոտական կարիերան չունի կայունություն ու գրավչություն, և անհրաժեշտ են նոր որակավորումներ՝ աշխատաշուկայի կարիքներն ավելի լավ լուծելու համար: Պորտուգալիան զգալի առաջընթացի է հասել գիտության և ճարտարագիտության շրջանավարտների թվաքանակի ավելացման հարցում՝ 2016-ին հասնելով ԵՄ միջին ցուցանիշին մոտ մակարդակներին[2]: Այնուամենայնիվ, ՏՏ ոլորտում շրջանավարտների թիվը մնում է ԵՄ միջինից ցածր: Արդյունաբերությունը (ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը) մտահոգություններ ուներ՝ կապված որակյալ մարդկանց գտնելու դժվարության հետ: Պորտուգալիայում բացակայում են բավականաչափ մասնագիտացված միջին և բարձր հմուտ աշխատողներ խելացի մասնագիտացման առաջնահերթ ոլորտներում՝ աշխատաշուկայի ներկա և ապագա պահանջարկը բավարարելու համար: Հետազոտողների մասնաբաժինը աշխատուժում ընդլայնվեց, բայց բիզնեսի կլանման կարողությունը դեռևս հանդիսանում է խոչընդոտ, չնայած այն դանդաղ հաղթահարվում է:

Ի տարբերություն ԵՄ անդամ այլ պետությունների՝ հետազոտական կարիերան հանրային հատվածում չունի կայունություն, և բացակայում է մրցակցային աշխատավարձը: Պայմանագրերը սովորաբար կարճաժամկետ են և հիմնված են կրթաթոշակների վրա, որոնք ունեն սահմանափակ սոցիալական արտոնություններ: Հետազոտական կարիերայի կարգավիճակը բարելավելու համար «Գիտական զբաղվածության» ծրագիրը ներառում է հարկաբյուջետային խրախուսանք, որի միջոցով ընկերությունները ստանում են 120 % հարկային զեղչ ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի շրջանավարտների աշխատանքի ընդունելիս և «Ինտերֆեյս» սխեմա, որը

[1] Информационное общество и ИТ в Португалии https://www.portugalglobal.pt/Russia/Pages/Russia2.aspx

[2] https://ec.europa.eu/eurostat/data/database

ֆինանսավորում է տրամադրում՝ ավելի երկարաժամկետ պայմանագրերով դոկտորանտուրայի շրջանավարտներին աշխատանքի ընդունելիս (3 տարվա ընթացքում նրանց աշխատավարձի 50 %-ը տրամադրվում է ծրագրի շրջանակներում)[1]:

Ոչ նյութական ակտիվների կորուստները կանխելու նպատակով առաջարկվում է ՀՀ-ի համար Պորտուգալիայի օրինակով մշակել «Գիտական զբաղվածության ծրագիր», որը կներառի «պետություն, գիտություն և մասնավոր հատված» համագործակցությունը, ինչը հնարավորություն կընձեռի գիտության թեկնածուներին ու դոկտորներին ընդգրկել մասնավոր հատված՝ ապահովելով երկկողմանի արդյունավետություն՝ մի կողմից՝ մասնավոր հատվածին հարկային արտոնություններ տրամադրելով, մյուս կողմից՝ կանխելով ուղեղների արտահոսքը և, միևնույն ժամանակ, հագեցնելով աշխատաշուկան որակավորված աշխատուժով:

Նորարարության զարգացման ուղին: Տնտեսական իրավիճակի կայունացման և բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման գործում Պորտուգալիայի շոշափելի հաջողությունները միջազգային ճանաչում են ստացել: 2005 թ. ԵՄ-25-ի շրջանակներում երկիրը նորարարության ցուցանիշով զբաղեցնում էր ընդամենը 18-րդ տեղը: R&D ծախսերը 2001-ին կազմել են ՀՆԱ 0,58 %-ը: Գիտահետազոտական ծախսերը 2003 թվականին կազմել են ՀՆԱ-ի ընդամենը 0,52%-ը[2]: Չնայած նոր գիտելիքների արտադրության մեջ շատ համեստ հաջողություններին՝ Պորտուգալիան շատ լավ արդյունքներ է ցույց տալիս փոխառված տեխնոլոգիաների ներդրման և տարածման գործում: Նոր տեխնոլոգիաներով աշխատող փոքր և միջին ձեռնարկությունների, ինչպես նաև կազմակերպական նորամուծություններ ներմուծող ձեռնարկությունների, այդ թվում՝ կառավարման ոլորտում, ԵՄ միջինից ավելին է. ինտերնետի և կապի տեխնոլոգիաների զարգացման համար ծախսերի մակարդակը բավականին բարձր է: Պորտուգալիայում, ինչպես շատ այլ երկրներում, որոնք օգտագործում են նորարարական զարգացման այլընտրանքային մոդել, առկա է հետազոտական կենտրոնների և արտադրական ընկերությունների միջև փոխհամագործակցության խնդիր[3]: Չնայած այն հանգամանքին, որ Պորտուգալիայում վենչուրային ֆինանսավորման մակարդակը անընդհատ աճում է (ի տարբերություն ԵՄ շատ այլ երկրների), բիզնեսի կողմից R&D ներդրումների ծավալը չի աճում: Պորտուգալիայում առավել նորարարական ճյուղերն են ինտերնետը և կապի տեխնոլոգիաները,

---

[1] Commission staff working document Country Report Portugal 2019 Including an In-Depth Review on the prevention and correction of macroeconomic imbalances Accompanying the document Communication from the commission to the European Parliament, The European Council, The Council, The European Central Bank and the Eurogroup, p 51-52.

[2] https://studwood.ru/695428/ekonomika/innovatsionnaya_sistema_portugalii

[3] Сергеев В. М., *Типология моделей инновационного развития,* № 4 (51), 2008, стр. 18 https://cyberleninka.ru/article/n/tipologiya-modeley-innovatsionnogo-razvitiya/viewer

էլեկտրական սարքավորումների և սարքերի արտադրությունը, հանքաքարերի և այլ օգտակար հանածոների արդյունահանումը, փայտամշակման արդյունաբերությունը, մետաղների վերամշակումը, տրանսպորտի որոշակի միջոցներ և այլն: Այնուամենայնիվ, վերջին տարիներին հատուկ ուշադրություն է դարձվել տեքստիլ արդյունաբերությանը, դեղագիտությանը, շինանյութերի արտադրությանը, տեղեկատվական տեխնոլոգիային, էներգիայի այլընտրանքային աղբյուրների զարգացմանը, ծառայությունների ոլորտին, ինչպես նաև բարձր-հումանիստ արդյունաբերությանը, ինչպիսիք են նորաձևությունը, ազգային խոհանոցը, ըմպելիքները և այլն: Ներկայումս հատուկ ուշադրություն է դարձվում տուրիզմի և այս ոլորտում նոր տեխնոլոգիաների զարգացմանն ու կառավարման կատարելագործմանը:

2010-ականների կեսերին Իսպանիայում և Պորտուգալիայում արդյունաբերական ռոբոտների արտադրությունը, վաճառքը և օգտագործումը զգալիորեն աճեցին, այդ չափանիշներով Իսպանիան մտավ աշխարհի լավագույն 10 երկրների շարքը: 2005-2015 թթ. Իսպանական արդյունաբերության մեջ ռոբոտների քանակն աճեց գրեթե 40 % -ով և հասավ 33,3 հազարի, ինչը ավելի քան 130 միավոր էր արդյունաբերության մեջ զբաղված 10 հազարի դիմաց: Այսպես կոչված ռոբոտացման խտության այս ցուցանիշը գրեթե կրկնակի գերազանցում է աշխարհի միջին ցուցանիշը: Կարևոր է նաև, որ ավելի քան 200 իսպանական ընկերություններ զբաղվում են ռոբոտաշինությամբ և նրանց արտադրանքի մեծ մասն արտահանվում է, մասնավորապես՝ հարևան Պորտուգալիա: Այս երկրում ձեռքբերումներն ավելի համեստ են. ռոբոտացման խտությունը 42 ռոբոտ է (2015 թ. արդյունաբերության մեջ զբաղված 10 հազարի դիմաց), ինչը զգալիորեն ցածր է, քան Եվրամիության առաջատար երկրներում: Պորտուգալական ձեռնարկությունները փորձում են փոխհատուցել իրենց հետ մնալը՝ բարձրացնելով ինչպես սեփական արտադրությունը, որով զբաղվում են 13 տեղական ընկերություններ, այնպես էլ ավելացնելով ներմուծումը[1]:

2017-ի հունվարի վերջին Պորտուգալիայի վարչապետ Անտոնիո Կոստան հայտարարեց երկրում արդյունաբերության 4.0-ի համապարփակ զարգացման պետական-մասնավոր ռազմավարության մասին: Իշխանությունների ծրագրի համաձայն՝ 4,5 միլիարդ եվրո գնահատված գործողությունների քառամյա ծրագիրը կապահովի 60 գործունեության իրականացում, որոնք աճի լրացուցիչ խթաններ կստեղծեն 50 հազար բարձր տեխնոլոգիական ընկերությունների համար: Այս ծրագիրը մշակվել է ավելի քան 10 ամիս մասնագետների մեծ խմբի կողմից և նախատեսում է ինչպես խոշոր կորպորացիաների, այդ թվում՝ արտասահմանյան անդրազգային կորպորացիաների պորտուգալական մասնաճյուղերի, այնպես էլ տեղական փոքր և միջին

[1] Испания и Португалия в эпоху глобальных трансформаций (Отв. ред. Н.М. Яковлева). М., ИЛА РАН, 2017. – 307 с. ISBN 978-5-9908156-9-8, стр. 21-24.

բիզնեսի մասնակցություն[1]: Պորտուգալիայի կառավարության աջակցության շնորհիվ Լիսաբոնը վերածվել է ստեղծագործական և տեխնոլոգիական կենտրոնի՝ տեխնոլոգիական հանգույցի: Լիսաբոնում ստարտափների թիվը ծաղկում է շնորհիվ ամենամյա վեբ գագաթնաժողովի, որն ավելի վաղ անցկացվում էր Դուբլինում: Կառավարության աջակցությունը նպաստում է նման գործունեության զարգացմանը: 2016-ի հունիսին Լիսաբոնում իշխանությունները ստեղծեցին տեխնոլոգիական կենտրոնների և ստարտափների ազգային ցանց՝ StartUP Voucher նախաձեռնության շրջանակներում, որը 400-ից ավելի ձեռնարկատերերի մեկամյա կրթաթոշակ է տալիս իրենց ծրագրերն իրականացնելու համար[2]: Բացի այդ, մեծ թվով հին չօգտագործված շենքեր վերածվել են գաղափարների իրականացման հսկայական վայրերի:

2018-ին Google ընկերությունը Լիսաբոնում բացեց նոր Տեխնիկական կենտրոն, Cisco կորպորացիան Պորտուգալիայի կառավարության հետ համատեղ սկսեց թվայնացման ազգային ծրագիր, իսկ OutSystems ընկերությունը ստեղծեց իր Առաջադեմ տեխնոլոգիաների կենտրոնը՝ ծրագրակազմի արտադրությունն ընդլայնելու համար: Ազգային մակարդակում ընդունված է, որ նորարարական ուղին Պորտուգալիայում կայուն զարգացման միակ ռազմավարությունն է:

Չնայած այն հանգամանքին, որ Պորտուգալիայի նորարարական զարգացման հիմնական ցուցանիշները մնում են ցածր առաջադեմ եվրոպական երկրների ձեռքբերումներից, վերջին տարիներին ներդրումների զգալի աճ է գրանցվել նորարարության և տեխնոլոգիայի ոլորտում: Պորտուգալիայի կառավարության հովանավորությամբ ստեղծվեց Գիտելիքի հասարակության զարգացման գործակալությունը, որն ինքնուրույն վերահսկում է տարբեր նորարարական ծրագրերի և նախագծերի իրականացումը, մասնավորապես՝ բժշկության և առողջապահության, կենսաարդյունաբերության և համակարգչային ոլորտներում: Գործակալության օժանդակությամբ ստեղծվում են ինովացիոն ինկուբատորների ցանց և տեխնոլոգիաների փոխանցման կենտրոններ: 2005 թվականից Պորտուգալիայի կառավարության կողմից մշակված «Տեխնոլոգիական պլանը» աստիճանաբար իրականացվում է. այն կոչված է փոխելու պորտուգալական հասարակությունը և ժամանակակից մարտահրավերների պայմաններում ստեղծելու մրցակցային պայմաններ: Ծրագիրը նախատեսում է հասարակության զարգացում երեք հիմնարար ոլորտներում՝ գիտելիք, տեխնոլոգիա և նորարարություն: Ծրագրի իրականացման համատեքստում Պորտուգալիան ցուցադրում է բավականին բարձր

---

[1] Яковлев П., Яковлева Н., Португалия: результаты постреволюционных трансформаций, Мировая экономика и международные отношения, 2019, том 63, № 10, с. 78-88, 83
https://www.imemo.ru/index.php?page_id=1248&file=https://www.imemo.ru/files/File/magazines/meimo/10_2019/09-YAKOVLEVA.pdf

[2] https://startupportugal.com

նորարարական ներուժ տնտեսության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են վերականգնվող էներգիան (հողմային, արևային, կենսազանգվածային, ալիքային էներգիա), նոր սերնդի տեքստիլ, կենսաքայքայվող պլաստմասսա, էներգախնայող տեխնոլոգիաներ, մսամթերքի արտադրություն (հնդկահավի ֆերմերային տնտեսություններ): Նորարարական գործընթացի հիմնական բաղադրիչը մասնագետների, նորարարական կառուցվածքի և ռեսուրսի ստեղծումն է: Այս առումով Պորտուգալիան հետևում է համաշխարհային միտումներին, մասնավորապես՝ ակտիվորեն զարգացնում է տեխնոլոգիական պարկերի ցանց, որոնք նոր գաղափարների և արդյունաբերության ինկուբատորներ են: Նման զբոսայգիները բավականին հաջող են գործում երկրի տարբեր շրջաններում: Դրանք աջակցվում են ազգային և եվրոպական կառուցվածքային ֆոնդերի կողմից և աստիճանաբար ինտեգրվում են ոլորտային և միջազգային ցանցերում: Միջազգային համագործակցության, մասնավորապես՝ Պորտուգալիայի և Իսպանիայի միջկառավարական համաձայնագրի շրջանակներում Բրագայում հիմնադրվեց Նանոտեխնոլոգիաների միջազգային լաբորատորիան, որտեղ աշխատում են հետազոտողներ տարբեր երկրներից: Հայտարարվում են լաբորատորիայի գործունեության հիմնական ուղղությունները՝ ախտորոշիչ համակարգեր, բուժական ծրագրեր, նանոբժշկություն, շրջակա միջավայրի հսկողություն և մոնիտորինգ, սննդամթերքի որակ և անվտանգություն:

Ճգնաժամից հետո Պորտուգալիայի տնտեսական զարգացմանը բնորոշ են ապրանքների և ծառայությունների արտահանման աճող դերը, ՀՆԱ-ում նրանց մասնաբաժնի աճը, համաշխարհային տնտեսական կապերի ակտիվացումը:

Գիտական նորույթը: ՀՀ ժողովրդագրական ճգնաժամի հաղթահարման նպատակով Պորտուգալիայի փորձի հիման վրա առաջարկվել և հիմնավորվել է պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարի չափի սահմանումը համակցել երեխաների թվաքանակի հետ՝ նպաստելով ծնելիության բարձրացմանը և կամավոր կուտակային համակարգի զարգացմանը:

ՀՀ աշխատաշուկան որակյալ կադրերով համալրելու և ոչ նյութական ակտիվների կորուստները կանխելու նպատակով առաջարկվել և հիմնավորվել է Պորտուգալիայի օրինակով մշակել «Գիտական զբաղվածության ծրագիր»՝ «պետություն, գիտություն և մասնավոր հատված» մշտական համագործակցության շեշտադրմամբ:

Եզրակացություն: «Մեխակների հեղափոխությունը» սահմանեց ազգային տնտեսության զարգացման նոր շրջանակ, առաջադրեց Պորտուգալիայի ազգային տնտեսության համապարփակ արդիականացման և երկրի աճի ավելի բարձր ուղեծրի մեջ դնելու խնդիր: Արդիականացման ծրագրի իրականացումը առանց բացառության դարձել էր հետսալազարական շրջանի բոլոր կառավարությունների տնտեսական քաղաքականության հիմքը: Պորտուգա-

լիայի տնտեսական խնդիրները գնալով բարդանում էին, և կառավարությունից պահանջվում էին վճռական միջոցներ՝ դրանք լուծելու համար: Ճգնաժամից դուրս գալու լավագույն ելքը հզոր տնտեսական բլոկին միանալն էր, ինչն այդ ժամանակ արդեն ԵՏՀ-ն էր: ԵՏՀ-ին Պորտուգալիայի անդամակցության շնորհիվ երկիրը հնարավորություն ստացավ վերակենդանացնելու իր տնտեսությունը:

Պորտուգալիայի ինտեգրումը ԵՄ-ին դարձավ հիմնական շարժիչ ուժը, որը խթանեց ազգային տնտեսության արդիականացումը և ապահովեց բնակչության կենսամակարդակի բարձրացումը եվրոպական չափանիշներին: Եվրոյի գոտուն միանալը և միասնական դրամավարկային քաղաքականության որդեգրումը բացեց երկրի համար ապրանքների և ծառայությունների լայն եվրոպական շուկա, բարձրացրեց դրա միջազգայնացման աստիճանը: Պորտուգալիայի եվրոպական ուղին ուղղակիորեն կապված էր կառուցվածքային անհավասարակշռության հաղթահարման հետ, որն առաջացել էր ինչպես եվրոպական ճգնաժամի, այնպես էլ եվրոյի գոտու անհավասար զարգացման հետևանքով, ինչպես նաև պետական պարտքի և ազգային տնտեսության կառուցվածքային անհավասարակշռությունների աճի պատճառով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Белов В.Б., Модернизировать хозяйственный механизм – первоочередная задача, стр. 62-68
2. Громыко Ал. А, Португалия: 40 лет после революции. Что дальше? = Portugal: 40 Years After the Revolution. What is Next? / [под ред. В.Л. Верникова]. М., Ин-т Европы РАН, 2014, 82 с. (Доклады Института Европы /Reports of the Institute of Europe /Федеральное гос. бюджет. учреждение науки Ин-т Европы Российской акад. наук , № 305). – Парал. тит. л. англ. – ISBN 978-5-98163-037-8. с. 8
3. Испания и Португалия в эпоху глобальных трансформаций (Отв. ред. Н.М. Яковлева). М., ИЛА РАН, 2017, 307 с. ISBN 978-5-9908156-9-8, 21-24
4. Кутырев Г. И., ПОРТУГАЛЬСКАЯ РЕСПУБЛИКА: СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ ЭКОНОМИКИ, Вестник Московского университета имени С. Ю. Витте. Серия 1: Экономика и управление, 2017 1(20), стр. 51 DOI: 10.21777/2307-6135-2017-1-48-55
5. Сергеев В. М., *Типология моделей инновационного развития,* № 4 (51) 2008, стр. 18, https://cyberleninka.ru/article/n/tipologiya-modeley-innovatsionnogo-razvitiya/viewer
6. Ford и VW в Португалии. В Португалии может случиться экономическое чудо, Журнал "Коммерсантъ Автопилот" №3 от 07.03.1995, стр. 7, https://www.kommersant.ru/doc/297176

7. Яковлев П., Яковлева Н., ПОРТУГАЛИЯ: РЕЗУЛЬТАТЫ ПОСТРЕВОЛЮЦИОННЫХ ТРАНСФОРМАЦИЙ, МИРОВАЯ ЭКОНОМИКА И МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, 2019, том 63, № 10, с. 78-88, 79, 10.20542/0131-2227-2019-63-10-78-88 https://www.imemo.ru/index.php?page_id=1248&file=https://www.imemo.ru/files/File/magazines/meimo/10_2019/09-YAKOVLEVA.pdf
8. Яковлев, П.П. Стратегические повороты экономической политики Португалии // Латинская Америка, 2014, №8, с. 38-52
9. COMMISSION STAFF WORKING DOCUMENT Country Report Portugal 2019 Including an In-Depth Review on the prevention and correction of macroeconomic imbalances Accompanying the document COMMUNICATION FROM THE COMMISSION TO THE EUROPEAN PARLIAMENT, THE EUROPEAN COUNCIL, THE COUNCIL, THE EUROPEAN CENTRAL BANK AND THE EUROGROUP
10. https://cyberleninka.ru/article/n/ponyat-portugalskuyu-revolyutsiyu/viewer
11. https://startupportugal.com
12. https://www.vedomosti.ru/finance/articles/2014/02/17/na-vyhode-iz-krizisa-ekonomika-portugalii-vnezapno-obognala
13. https://voxeu.org/article/turnaround-portuguese-economy
14. https://www.wikiru.wiki/blog/pt/AutoEuropa

References

1. Belov V.B., Modernizirovat'' hozjajstvennyj mehanizm – pervoocherednaja zadacha, str. 62-68
2. Gromyko Al.A, Portugalija: 40 let posle revoljucii. Chto dal'she? = Portugal: 40 Years After the Revolution. What is Next? / [pod red. V.L. Vernikova] . – M. : In-t Evropy RAN, 2014. – 82 s., (Doklady Instituta Evropy = Reports of the Institute of Europe / Federal'noe gos. bjudzhet. uchrezhde nie nauki In-t Evropy Rossijskoj akad. nauk ; # 305). – Paral. tit. l. angl. – ISBN 978-5-98163-037-8. s.8
3. Ford i VW v Portugalii, V Portugalii mozhet sluchit'sja jekonomicheskoe chudo, Zhurnal "Kommersant" Avtopilot" #3 ot 07.03.1995, str. 7, https://www.kommersant.ru/doc/297176
4. Ispanija i Portugalija v jepohu global'nyh transformacij (Otv. red. N.M. Jakovleva). – M.: ILA RAN, 2017. – 307 s. ISBN 978-5-9908156-9-8 , 21-24
5. Kutyrev G. I., PORTUGAL''SKAJa RESPUBLIKA: SOVREMENNOE SOSTOJaNIE JeKONOMIKI, Vestnik Moskovskogo universiteta imeni S. Ju. Vitte. Serija 1: Jekonomika i upravlenie, 2017 1(20), str. 51 DOI: 10.21777/2307-6135-2017-1-48-55
6. Sergeev V. M., Tipologija modelej innovacionnogo razvitija,#4 (51) 2008, str. 18
7. Jakovlev P., Jakovleva N., PORTUGALIJA: REZUL''TATY POSTREVOLJuCIONNYH TRANSFOR-MACIJ, MIROVAJa JeKONOMIKA I MEZhDUNARODNYE OTNOShENIJa, 2019, tom 63, # 10, s. 78-88, 10.20542/0131-2227-2019-63-10-78-88

8. Jakovlev, P.P. Strategicheskie povoroty jekonomicheskoj politiki Portugalii // Latinskaja Amerika. – 2014. – #8. – s. 38-52
9. COMMISSION STAFF WORKING DOCUMENT Country Report Portugal 2019 Including an In-Depth Review on the prevention and correction of macroeconomic imbalances Accompanying the document COMMUNICATION FROM THE COMMISSION TO THE EUROPEAN PARLIAMENT, THE EUROPEAN COUNCIL, THE COUNCIL, THE EUROPEAN CENTRAL BANK AND THE EUROGROUP
10. https://cyberleninka.ru/article/n/ponyat-portugalskuyu-revolyutsiyu/viewer
11. https://startupportugal.com
12. https://www.vedomosti.ru/finance/articles/2014/02/17/na-vyhode-iz-krizisa-ekonomika-portugalii-vnezapno-obognala
13. https://voxeu.org/article/turnaround-portuguese-economy
14. https://www.wikiru.wiki/blog/pt/AutoEuropa

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

ՇՈՂԵՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Համառոտագիր: Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս հետպատերազմական շրջանում առանձնահատուկ նշանակություն ունեն արտասահմանյան երկրների տնտեսությունների զարգացման առաջավոր փորձի ուսումնասիրությունն ու արդյունավետ կիրառումը ՀՀ-ում: Հատկապես մեծ ուշադրության է արժանի այն երկրների փորձը, որոնք որոշակի ընդհանրություններ ունեն մեր երկրի հետ և հեղափոխությունից հետո կարողացել են արձանագրել տնտեսական աճ: Այս համատեքստում որոշակիորեն կարևորվում է Պորտուգալիայի տնտեսության զարգացման փորձի ուսումնասիրությունը, ինչն էլ պայմանավորում է մեր հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է Պորտուգալիայի տնտեսական փորձի ուսումնասիրության միջոցով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանն ուղղված բարեփոխումների իրականացման մեխանիզմների բացահայտումը: Հետազոտության խնդիրն է Պորտուգալիայի տնտեսության առանձին ոլորտների զարգացման գործընթացների վերլուծության արդյունքների հիման վրա ՀՀ տնտեսության ոլորտների զարգացման հավանական ուղիների մշակումը: Հոդվածում ներկայացված հետհեղափոխական զարգացումները հնարավորություն են տալիս որոշակիորեն կանխատեսել համաշխարհային տնտեսության և քաղաքական աշխարհակարգի զարգացման կայուն միտումները, ինչպես նաև դրանցում գործող սուբյեկտների, կառույցների և ինստիտուտների վարքագիծը:

Հետազոտությունների ընթացքում կիրառվել են համակարգային և իրավիճակային վերլուծության, տնտեսավիճակագրական խմբավորումների, ինդուկ-

ցիայի և դեդուկցիայի, համեմատական և գործոնային վերլուծությունների, գիտական աբստրահման մեթոդները:

Գիտական նորույթը: ՀՀ ժողովրդագրական ճգնաժամի հաղթահարման նպատակով Պորտուգալիայի փորձի հիման վրա առաջարկվել և հիմնավորվել է պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարի չափի սահմանումը համակցել երեխաների թվաքանակի հետ՝ նպաստելով ծնելիության բարձրացմանը և կամավոր կուտակային համակարգի զարգացմանը:

ՀՀ աշխատաշուկան որակյալ կադրերով համալրելու և ոչ նյութական ակտիվների կորուստները կանխելու նպատակով առաջարկվել և հիմնավորվել է Պորտուգալիայի օրինակով մշակել «Գիտական զբաղվածության ծրագիր»՝ «պետություն, գիտություն և մասնավոր հատված» մշտական համագործակցության շեշտադրմամբ:

Բանալի բառեր՝ տնտեսություն, զարգացում, բարեփոխումներ, Պորտուգալիա, ԵՄ, ճգնաժամ, արդիականացում, վերազինում, նորարարություն

ПУТЬ ЭКОНОМИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ ПОРТУГАЛИИ

ШОГЕР ПОГОСЯН

Аннотация: В нынешний послевоенный период развития экономики Республики Армения особое значение приобретают изучение и эффективное применение передового опыта развития экономик зарубежных стран в Республике Армения. Особого внимания заслуживает опыт тех стран, которые имеют определенные сходства с нашей страной и после революции смогли зафиксировать экономический рост. В этом контексте в определенной степени важно изучение опыта развития португальской экономики, что определяет актуальность темы нашего исследования.

Целью исследования является выявление механизмов осуществления реформ, направленных на развитие экономики Республики Армения, посредством изучения экономического опыта Португалии. Задачей исследования является разработка возможных путей развития секторов экономики РА на основе результатов анализа процессов развития отдельных секторов португальской экономики. Представленные в статье постреволюционные развития позволяют в определенной степени спрогнозировать устойчивые тенденции развития мировой экономики и политического мироустройства, а также поведение действующих в них субъектов, структур и институтов.

В рамках исследования изучались экономические реформы и исторический путь развития Португалии. В ходе исследования использовались методы системно-ситуационного анализа, экономико-статистических группировок, индукции и дедукции, сравнительного и факторного анализа, научной абстракции.

Научная новизна. Для преодоления демографического кризиса Республики Армения на опыте Португалии обосновано сочетание определения размера обязательной накопительной пенсии с количеством детей, способствуя увеличению рождаемости и развитию добровольной накопительной системы.

Для обеспечения рынка труда Республики Армения квалифицированными кадрами и предотвращения потери нематериальных активов было предложено и обоснованно разработать «Программу научной занятости» по примеру Португалии, сделав упор на постоянное сотрудничество «государства, науки и частного сектора».

Ключевые слова: экономика, развитие, реформы, Португалия, ЕС, кризис, модернизация, переоборудование, инновации

THE COURSE OF PORTUGAL´S ECONOMIC TRANSFORMATION

SHOGHER POGHOSYAN

Abstract. In the current post-war period of the economic development of the Republic of Armenia, the study of the advanced experience of foreign countries' economies' development and the effective localization of it in the Republic of Armenia is of special importance. The experience of countries that have some similarities with our country, which also were able to record economic growth after the revolution, is especially noteworthy. In this context, the study of the experience of Portugal and its economic development is somewhat valued, which determines the urgency of the research topic.

The main purpose of the research is to reveal the mechanisms of reforms aimed at the development of the Armenian economy through the study of the economic experience of Portugal.

The main task of the research is to develop possible ways of developing the sectors of the Armenian economy based on the analysis of the development processes of individual sectors of the Portuguese economy. The post-revolutionary developments presented in the article make it possible to predict to some extent the stable tendencies of the world economy, the development of the political world order, as well as the behavior of the actors, structures and institutions operating in them.

Within the framework of research the methods of system-situational analysis, economic and statistical groupings, induction and deduction, comparative and factor analysis, scientific abstraction were used.

Scientific novelty. In order to overcome the demographic crisis in Armenia, based on the experience of Portugal, it was proposed to combine the definition of the mandatory funded pension payment with the number of children, which will contribute to the increase of the birth rate and the development of the voluntary funded system.

In order to replenish the RA labor market with qualified personnel, and also to prevent the loss of intangible assets, it was proposed to develop “Scientific employment program” based on the example of Portugal, with the emphasis on permanent cooperation between the state, science and the private sector.

Keywords: economy, development, reforms, Portugal, EU, crisis, modernization, re-equipment, innovation